ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/819 «13» 07 2018թ.

«Սլայդ Արտ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ
ք. Երևան, Տիգրան Մեծ 28

Երևանի քաղաքապետարանի և «Սլայդ Արտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1», 12.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» և 05.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրերով գնման պայմանագրերի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն պայմանագրերի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերի պահանջների:

«Սլայդ Արտ» ՍՊԸ-ն 09.07.2018 թվականի թիվ 01 գրությամբ հրաժարվել է 12.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրով գնման պայմանագրի 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ չափաբաժիններով, 12.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծածկագրով գնման պայմանագրով և 05.02.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով գնման պայմանագրի 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունների կատարումից:

Պայմանագրերի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, սակայն ընկերության կողմից չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի՝ («ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրերով գնման պայմանագրերի մասով մասնակի) հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների մատուցման գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով դրանք միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն պայմանագրերի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի՝ Համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրերի կատարման ապահովման գումարները գանձելու նպատակով՝ ըստ համապատասխան պայմանագրերի.

-«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/56-1» ծածկագրով գնման պայմանագրի մասով 450000 (Չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

-«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/17-1» ծածկագրով գնման պայմանագրի մասով 550000 (Հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

-«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/25-2» ծածկագրով գնման պայմանագրի մասով 210 000 (Երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Ա. Համբարձումյան
011 514-375